Հավելված 7
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/84»* ծածկագրով
Գնանշման հարցման մրցույթի հրավերի

# ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԿԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/84»

ք. Վանաձոր «18» հոկտեմբեր 2021թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Վանիկ Օհանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ռ. Ղազարյան>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Աբրահամյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 56 շենքի բակի, Բաթումի փողոցի թիվ 19 շենքի բակի, Թումանյան փողոցի թիվ 11 շենքի բակի, Չուխաջյան փողոցի թիվ 26-30 շենքերի բակերի, Մյասնիկյան փողոցի թիվ 7 շենքի /20-րդ դպրոց/ բակի, Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 40-50 շենքերի բակի, Երևանյան խճուղու թիվ 127 շենքին կից հատվածի և թիվ 137 շենքի բակի բարեկարգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր

հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները,եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում,ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը),իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ,պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները,եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին,կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական,ջեռուցման,ջրամատակարարման,կոյուղու,օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում,մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին,որոնց պահպանումն

անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, պահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 **օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը,ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների,փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում,առանց լրացուցիչ վճարի,կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 47987471 (քառասունյոթ միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար չորս հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ, որից 7997912 (յոթ միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր տասներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 3088512 (երեք միլիոն ութսունութ հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամ՝ որից 514752 (հինգ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 4050020 (չորս միլիոն հիսուն հազար քսան) ՀՀ դրամ՝ որից 675003 (վեց հարյուր յոթանասունհինգ հազար երեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 13827922 (տասներեք միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր քսաներկու) ՀՀ դրամ՝ որից 2304654 (երկու միլիոն երեք հարյուր չորս հազար վեց հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին 11856028 (տասնմեկ միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար քսանութ) ՀՀ դրամ՝ որից 1976005 (մեկ միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար հինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5-րդ չափաբաժին 1750763 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ՝ որից 291794 (երկու հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

7-րդ չափաբաժին 6703064 (վեց միլիոն յոթ հարյուր երեք հազար վաթսունչորս) ՀՀ դրամ՝ որից 1117177 (մեկ միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

8-րդ չափաբաժին 6711162 (վեց միլիոն յոթ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ՝ որից 1118527 (մեկ միլիոն մեկ հարյուր տասնութ հազար հինգ հարյուր քսանյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2և 6.3կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05(զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը,պատերազմը,ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք)ամսից ավելի,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2Պայմանագրից ծագած՝կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի,առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը,ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը,եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝

համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի
համայնքապետարան
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900232001397
ՀՎՀՀ 06901936

-------------------------- Վ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ռ.Ղազարյան» ՍՊԸ
ք.Վանաձոր, Տավրոս 21փ 22տ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
հ/հ 1150016117777758
ՀՎՀՀ 06958302

-------------------------- Ա. Աբրահամյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված թիվ 1
«18» հոկտեմբեր 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/84 ծածկագրով պայմանագրի

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 56 շենքի բակի բարեկարգման աշխատանքների

| հ/հ | *Աշխատանքի անվանում* | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (հազ. դրամ) | Արժեքը (հազ. դրամ) | Տեսակարար կշիռ % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բակի տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ$^3$ | 0.0570 | 143,000 | 8,151 | |
| 2 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 5սմ հաստ. | մ$^3$ | 28.50 | 3,450 | 98,325 | |
| 3 | «Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100մ$^2$ | 5.70 | 304,000 | 1732,800 | |
| 4 | Առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0.0570 | 479,000 | 27,303 | |
| 5 | Առաջացած շին. աղբի տեղափոխում ա/ինքնաթափով 7կմ հեռ. | տն | 85.50 | 0,560 | 47,880 | |
| 6 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի ապամոնտաժում | հատ | 5.00 | 3,280 | 16,400 | |
| 7 | Դիտահորի բարձրացում B-7.5 բետոնով | մ$^3$ | 0.85 | 38,000 | 32,300 | |
| 8 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | հատ | 5.00 | 4,750 | 23,750 | |
| | Ընդամենը՝ | | | | 1986,909 | 100 |
| | Վերադիր ծախսեր՝ 13.3% | | | | 264,259 | |
| | Ընդամենը՝ | | | | 2251,168 | |
| | Շահույթ՝ 11% | | | | 247,628 | |
| | Ընդամենը՝ | | | | 2498,796 | |
| | Չնախատեսված ծախսեր 3% | | | | 74,964 | |
| | Ընդամենը՝ | | | | 2573,760 | |
| | Ա.Ա.Հ. 20% | | | | 514,752 | |
| | Ընդամենը՝ | | | | 3088,512 | |

* Կապալառուն աշխատանքները կատարում է Տիգրան Մեծի պողոտայի թիվ 56 շենքի բակում։

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 2
## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի թիվ 19 շենքի բակի բարեկարգման աշխատանքների

| հ/հ | *Աշխատանքի անվանում* | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (հազ. դրամ) | Արժեքը (հազ. դրամ) | Տեսակարար կշիռ % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բակի տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ | 1000մ$^3$ | 0.0590 | 143,000 | 8,437 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բուլդոզերով | | | | | |
| 2 | Սալվածքի ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | մ² | 160.00 | 0,060 | 9,600 | |
| 3 | Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում | մ | 16.82 | 0,880 | 14,802 | |
| 4 | Բազալտե եզրաքարերի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | մ | 16.82 | 2,900 | 48,778 | |
| 5 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 5սմ հաստ. | մ³ | 29.50 | 3,450 | 101,775 | |
| 6 | «Դ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում սալվածքներում /4սմ/ | 100մ² | 1.600 | 315,500 | 504,800 | |
| 7 | «Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100մ² | 5.900 | 304,000 | 1793,600 | |
| 8 | Առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ³ | 0.059 | 479,000 | 28,261 | |
| 9 | Առաջացած շին. աղբի տեղափոխում ա/ինքնաթափով 7կմ հեռ. | տն | 88.50 | 0,560 | 49,560 | |
| 10 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի ապամոնտաժում | հատ | 4.00 | 3,280 | 13,120 | |
| 11 | Դիտահորի բարձրացում B-7.5 բետոնով | մ³ | 0.68 | 20,200 | 13,736 | |
| 12 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | հատ | 4.00 | 4,750 | 19,000 | |
| | Ընդամենը՝ | | | | 2605,469 | 100 |
| | Վերադիր ծախսեր՝ 13.3% | | | | 346,527 | |
| | Ընդամենը՝ | | | | 2951,996 | |
| | Շահույթ՝ 11% | | | | 324,720 | |
| | Ընդամենը՝ | | | | 3276,715 | |
| | Չնախատեսված ծախսեր 3% | | | | 98,301 | |
| | Ընդամենը ՝ | | | | 3375,017 | |
| | Ա.Ա.Հ. 20% | | | | 675,003 | |
| | Ամբողջը՝ | | | | 4050,020 | |

* Կապալառուն աշխատանքները կատարում է Բաթումի փողոցի թիվ 19 շենքի բակում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ ***

Վանաձոր համայնքի Թումանյան փողոցի թիվ 11 շենքի բակի բարեկարգման աշխատանքների

| հ/հ | *Աշխատանքի անվանում* | **Չափման միավորը** | **Քանակը** | **Միավորի գինը (հազ. դրամ)** | **Արժեքը (հազ. դրամ)** | **Տեսակարար կշիռ %** |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բակի տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ$^3$ | 0.1995 | 143,000 | 28,529 | |
| 2 | Սալվածքի ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | մ$^2$ | 649.00 | 0,060 | 38,940 | |
| 3 | Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում | մ | 52.00 | 0,880 | 45,760 | |
| 4 | Բազալտե եզրաքարերի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | մ | 52.00 | 2,900 | 150,800 | |
| 5 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 5սմ հաստ. | մ$^3$ | 99.75 | 3,450 | 344,138 | |
| 6 | «Դ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում սալվածքներում /4սմ/ | 100մ$^2$ | 6.490 | 310,000 | 2011,900 | |
| 7 | «Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100մ$^2$ | 19.950 | 301,500 | 6014,925 | |
| 8 | Առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0.1995 | 215,510 | 42,994 | |
| 9 | Առաջացած շին. աղբի տեղափոխում ա/ինքնաթափով 7կմ հեռ. | տն | 299.25 | 0,560 | 167,580 | |
| 10 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի ապամոնտաժում | հատ | 3.00 | 3,280 | 9,840 | |
| 11 | Դիտահորի բարձրացում B-7.5 բետոնով | մ$^3$ | 0.34 | 20,200 | 6,868 | |
| 12 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | հատ | 2.00 | 4,750 | 9,500 | |
| 13 | Անձրևաջրատար հորերի բարձրացում B-7.5 բետոնով | մ$^3$ | 1.19 | 20,200 | 24,038 | |
| | Ընդամենը | | | | 8895,811 | 100 |
| | Վերադիր ծախսեր 13.3% | | | | 1183,143 | |
| | Ընդամենը | | | | 10078,954 | |
| | Շահույթ 11% | | | | 1108,685 | |
| | Ընդամենը | | | | 11187,639 | |
| | Չնախատեսված ծախսեր 3% | | | | 335,629 | |
| | Ընդամենը | | | | 11523,268 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ա.Ա.Հ. 20% | | | | 2304,654 | |
| | Ամբողջը | | | | 13827,922 | |

* Կապալառուն աշխատանքները կատարում է Թումանյան փողոցի թիվ 11 շենքի բակում:

ՉԱՓԱԲԱԺԻՆ 4

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոցի թիվ 26-30 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքների

| հ/հ | *Աշխատանքի անվանում* | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (հազ. դրամ) | Արժեքը (հազ. դրամ) | Տեսակարար կշիռ % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բակի տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ³ | 0.1373 | 143,000 | 19,634 | |
| 2 | Սալվածքի ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | մ² | 802.00 | 0,060 | 48,120 | |
| 3 | Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում | մ | 50.80 | 0,880 | 44,704 | |
| 4 | Բազալտե եզրաքարերի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | մ | 50.80 | 2,900 | 147,320 | |
| 5 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 5սմ հաստ. | մ³ | 68.65 | 3,450 | 236,843 | |
| 6 | «Դ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում սալվածքներում /4սմ/ | 100մ² | 8.020 | 310,000 | 2486,200 | |
| 7 | «Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100մ² | 13.730 | 303,050 | 4160,877 | |
| 8 | Առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ³ | 0.13730 | 479,000 | 65,767 | |
| 9 | Առաջացած շին. աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տն | 205.95 | 0,800 | 164,760 | |
| 10 | Խճային հիմքի կառուցում փոսային նորոգման համար | մ³ | 3.00 | 7,200 | 21,600 | |
| 11 | Նորոգվող մակերեսի եզրերի բիտումապատում | տն | 0.0100 | 220,000 | 2,200 | |
| 12 | Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ «Ա» տիպի ա/բետոնով /5սմ/ | մ² | 30.00 | 5,550 | 166,500 | |
| 13 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի ապամոնտաժում | հատ | 6.00 | 3,280 | 19,680 | |
| 14 | Դիտահորի բարձրացում B-7.5 բետոնով | մ³ | 0.72 | 20,200 | 14,544 | |
| 15 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | հատ | 6.00 | 4,750 | 28,500 | |
| | Ընդամենը՝ | | | | 7627,248 | 100 |
| | Վերադիր ծախսեր՝ 13.3% | | | | 1014,424 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը՝ | | | | 8641,672 | |
| | Շահույթ՝ 11% | | | | 950,584 | |
| | Ընդամենը՝ | | | | 9592,255 | |
| | Չնախատեսված ծախսեր 3% | | | | 287,768 | |
| | Ընդամենը՝ | | | | 9880,023 | |
| | Ա.Ա.Հ. 20% | | | | 1976,005 | |
| | Ընդամենը՝ | | | | 11856,028 | |

* Կապալառու աշխատանքները կատարում է Չուխաջյան փողոցի թիվ 26-30 շենքերի բակերում:

ՉԱՓԱԲԱԺԻՆ 5

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոցի թիվ 7 շենքի (20-րդ դպրոց) բակի բարեկարգման աշխատանքների

| h/h | *Աշխատանքի անվանում* | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (հազ. դրամ) | Արժեքը (հազ. դրամ) | Տեսակարար կշիռ % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բակի տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ³ | 0.0333 | 143,000 | 4,762 | |
| 2 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 5սմ հաստ. | մ³ | 16.65 | 3,450 | 57,443 | |
| 3 | «Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100մ² | 3.330 | 302,000 | 1005,660 | |
| 4 | Առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ³ | 0.03330 | 479,000 | 15,951 | |
| 5 | Առաջացած շին. աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ. | տն | 50.00 | 0,560 | 28,000 | |
| 6 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի ապամոնտաժում | հատ | 1.00 | 3,280 | 3,280 | |
| 7 | Դիտահորի բարձրացում B-7.5 բետոնով | մ³ | 0.17 | 38,000 | 6,460 | |
| 8 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | հատ | 1.00 | 4,750 | 4,750 | |
| | Ընդամենը՝ | | | | 1126,305 | 100 |
| | Վերադիր ծախսեր՝ 13.3% | | | | 149,799 | |
| | Ընդամենը՝ | | | | 1276,104 | |
| | Շահույթ՝ 11% | | | | 140,371 | |
| | Ընդամենը՝ | | | | 1416,475 | |
| | Չնախատեսված ծախսեր 3% | | | | 42,494 | |
| | Ընդամենը՝ | | | | 1458,969 | |
| | Ա.Ա.Հ. 20% | | | | 291,794 | |
| | Ընդամենը՝ | | | | 1750,763 | |

* Կապալառու աշխատանքները կատարում է Մյասնիկյան փողոցի թիվ 7 շենքի /20-րդ դպրոց/ բակի հասցեում:

ՉԱՓԱԲԱԺԻՆ 7

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

Վանաձոր համայնքի Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 40-50 շենքերի բակի բարեկարգման աշխատանքների

| հ/հ | *Աշխատանքի անվանում* | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (հազ. դրամ) | Արժեքը (հազ. դրամ) | Տեսակարար կշիռ % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բակի տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ³ | 0.0866 | 143,000 | 12,384 | |
| 2 | Սալվածքի ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | մ² | 447.00 | 0,060 | 26,820 | |
| 3 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 5սմ հաստ. | մ³ | 43.300 | 3,450 | 149,385 | |
| 4 | «Դ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում սալվածքներում /4սմ/ | 100մ² | 4.470 | 310,000 | 1385,700 | |
| 5 | «Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100մ² | 8.660 | 302,600 | 2620,516 | |
| 6 | Առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ³ | 0.0866 | 479,000 | 41,481 | |
| 7 | Առաջացած շին. աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 3կմ հեռ. | տն | 129.90 | 0,250 | 32,475 | |
| 8 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի ապամոնտաժում | հատ | 3.00 | 3,280 | 9,840 | |
| 9 | Դիտահորի բարձրացում B-7.5 բետոնով | մ³ | 0.51 | 38,000 | 19,380 | |
| 10 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի տեղադրում օգտագործելով ապամոնտաժված | հատ | 3.00 | 4,750 | 14,250 | |
| | Ընդամենը՝ | | | | 4312,231 | 100 |
| | Վերադիր ծախսեր՝ 13.3% | | | | 573,527 | |
| | Ընդամենը՝ | | | | 4885,758 | |
| | Շահույթ՝ 11% | | | | 537,433 | |
| | Ընդամենը՝ | | | | 5423,191 | |
| | Չնախատեսված ծախսեր 3% | | | | 162,696 | |
| | Ընդամենը՝ | | | | 5585,887 | |
| | Ա.Ա.Հ. 20% | | | | 1117,177 | |
| | Ընդամենը՝ | | | | 6703,064 | |

* Կապալառուն աշխատանքները կատարում է Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 40-50 շենքերի բակում:

ՉԱՓԱԲԱԺԻՆ 8

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

Վանաձոր համայնքի Երևանյան խճուղու թիվ 127 շենքին կից հատվածի և 137 շենքի բակի բարեկարգման աշխատանքների

| հ/հ | Աշխատանքի անվանում | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (հազ. դրամ) | Արժեքը (հազ. դրամ) | Տեսակարար կշիռ % |
|---|---|---|---|---|---|---|
| | *Ճանապարհի ասֆալտապատում* | | | | | |
| 1 | Ճանապարհի տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ$^3$ | 0.0297 | 143,000 | 4,247 | |
| 2 | Առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0.02970 | 479,000 | 14,226 | |
| 3 | Առաջացած շին. աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տն | 44.55 | 0,8 | 35,640 | |
| 4 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 5սմ հաստ. | մ$^3$ | 14.85 | 3,45 | 51,233 | |
| 5 | Խճային հիմք 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2 | 100մ$^2$ | 2.97 | 178,35 | 529,700 | |
| 6 | Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/ | 100մ$^2$ | 2.97 | 364,5 | 1082,565 | |
| | | | | | 1717,610 | 39,78 |
| | *Բակի ասֆալտապատում* | | | | | |
| 1 | Բակի տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ$^3$ | 0.0600 | 143,000 | 8,580 | |
| 2 | Սալվածքի ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | մ$^2$ | 149.00 | 0,060 | 8,940 | |
| 3 | Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում | մ | 17.00 | 0,880 | 14,960 | |
| 4 | Բազալտե եզրաքարերի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | մ | 17.00 | 2,900 | 49,300 | |
| 5 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 5սմ հաստ. | մ$^3$ | 30.00 | 3,450 | 103,500 | |
| 6 | «Դ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում սալվածքներում /4սմ/ | 100մ$^2$ | 1.490 | 306,000 | 455,940 | |
| 7 | «Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100մ$^2$ | 6.000 | 300,000 | 1800,000 | |
| 8 | Առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0.060 | 479,000 | 28,740 | |
| 9 | Առաջացած շին. աղբի տեղափոխում ա/ինքնաթափով 12կմ հեռ. | տն | 90.00 | 0,960 | 86,400 | |
| 10 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի ապամոնտաժում | հատ | 3.00 | 3,280 | 9,840 | |
| 11 | Դիտահորի բարձրացում B-7.5 բետոնով | մ$^3$ | 0.51 | 38,000 | 19,380 | |
| 12 | Դիտահորերի հավաքովի ե/բ սալի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | հատ | 3.00 | 4,750 | 14,250 | |
| | | | | | 2599,830 | 60,22 |
| | Ընդամենը՝ | | | | 4317,440 | 100 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Վերադիր ծախսեր՝13.3% | | | | 574,220 | |
| | Ընդամենը՝ | | | | 4891,660 | |
| | Շահույթ՝11% | | | | 538,083 | |
| | Ընդամենը՝ | | | | 5429,743 | |
| | Չնախատեսված ծախսեր 3% | | | | 162,892 | |
| | Ընդամենը՝ | | | | 5592,635 | |
| | Ա.Ա.Հ. 20% | | | | 1118,527 | |
| | Ամբողջը՝ | | | | 6711,162 | |

*Կապալառուն աշխատանքները կատարում է Երևանյան խճուղի թիվ 127 շենքին կից հատվածի և 137 շենքի բակում:

*Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ են՝*
2 հատ ինքնաթափ-բեռնատարողությունը առնվազն 5տոննա,
1 հատ գլդոն-քաշը՝ 3-10տն,
1 հատ տրակտոր-բուլդոզեր- քաշը՝6-8տն:
1 ինժեներ- առնվազն 3 տարվա աշխ.փորձ մասնագիտ. վկայականի պատճեն,
1 մեխանիզատոր-տրակտորիստ-առնվազն 3 տարվա աշխ.փորձ վարորդական վկայականի պատճեն,
1 գլդոնավար-առնվազն 3 տարվա աշխ.փորձ,
2 վարորդ- առնվազն 3 տարվա աշխ.փորձ վարորդական վկայականի պատճեն,
5 բանվոր:
Աշխատանքների համար երաշխիքային ժամկետ է համարվում 2 տարի:
Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օր:
Աշխատանքներն իրականացվելու են հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:
*Լիցենզիայի առկայության մասին.* քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) ըստ հետևյալ ոլորտի՝ •տրանսպորտային:
*Մասնագիտական փորձառություն.*համանման (նմանատիպ) է համարվում փողոցների հիմնանորոգման աշխատանքների կատարված լինելը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի
համայնքապետարան
ք.Վանաձոր,Տիգրան Մեծի 22
Կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900232001397
ՀՎՀՀ 06901936

-------------------------- Վ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ռ.Ղազարյան»ՍՊԸ
ք.Վանաձոր,Տավրոս 21փ 22տ
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
հ/հ 1150016117777758
ՀՎՀՀ 06958302

--------------------- Ա. Աբրահամյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«18» հոկտեմբեր 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱԾՁԲ-21/84 ծածկագրով պայմանագրի

**Չափաբաժին 1**

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱՅԻ ԹԻՎ 56 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Տիգրան Մեծի պողոտայի թիվ 56 շենքի բակի բարեկարգում | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

**Չափաբաժին 2**

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂ. ԹԻՎ 19 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Բաթումի փողոցի թիվ 19 շենքի բակի բարեկարգում | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

**Չափաբաժին 3**

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂ. ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Թումանյան փողոցի թիվ 11 շենքի բակի բարեկարգում | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

| | | |
|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

**Չափաբաժին 4**

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26-30 ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Չուխաջյան փողոցի թիվ 26-30 շենքերի բակերի բարեկարգում | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

**Չափաբաժին 5**

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂ[illegible] ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ (20-ՐԴ ԴՊՐՈՑ) ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Մյասնիկյան փողոցի թիվ 7 շենքի (20-րդ դպրոց) բակի բարեկարգում | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

**Չափաբաժին 7**

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԻՎ 40-50 ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Վանաձոր համայնքի Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 40-50 շենքերի բակի բարեկարգում | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

| | | |
|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

**Չափաբաժին 8**

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ԹԻՎ 127 ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ՀԱՏՎԱԾԻ և ԹԻՎ 137 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ճանապարհի ասֆալտապատում | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |
| 2 | Բակի ասֆալտապատում | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Պայմանագրի կնքման օրվանից | 60 օրացուցային օր |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի
համայնքապետարան
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի
22
Կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900232001397
ՀՎՀՀ 06901936

-------------------------- Վ. Օհանյան
/ստորագրություն/ Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ռ.Ղազարյան» ՍՊԸ
ք.Վանաձոր, Տավրոս 21փ 22տ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
հ/հ 1150016117777758
ՀՎՀՀ 06958302

-------------------- Ա. Աբրահամյան
/ստորագրություն/
Կ.Տ

***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N3
«18» հոկտեմբեր 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔԳՀԱԾՁԲ-21/84 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 45221142/13 | Տիգրան Մեծի պողոտայի թիվ 56 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | 3 088 512 | 3 088 512 | 3 088 512 | 3 088 512 |
| 2 | 45221142/14 | Բաթումի փողոցի թիվ 19 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | 4 050 020 | 4 050 020 | 4 050 020 | 4 050 020 |
| 3 | 45221142/15 | Թումանյան փողոցի թիվ 11 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | 13 827 922 | 13 827 922 | 13 827 922 | 13 827 922 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 45221142/16 | Զուխաջյան փողոցի թիվ 26-30 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | | | 11 856 028 | 11 856 028 | 11 856 028 | 11 856 028 |
| 5 | 45221142/17 | Մյասնիկյան փող. թիվ 7 շենքի (20-րդ դպրոց) բակի բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | | | 1 750 763 | 1 750 763 | 1 750 763 | 1 750 763 |
| 7 | 45221142/19 | Տարոն-2 ՔԾՀ-3 թիվ 40-50 շենքերի բակի բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | | | 6 703 064 | 6 703 064 | 6 703 064 | 6 703 064 |
| 8 | 45221142/20 | Երևանյան խճուղու թիվ 127 շենքին կից հատվածի և թիվ 137 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | | | 6 711 162 | 6 711 162 | 6 711 162 | 6 711 162 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի
համայնքապետարան
ք.Վանաձոր,Տիգրան Մեծի 22
Կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900232001397
ՀՎՀՀ 06901936

------------------------- Վ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ռ.Ղազարյան»ՍՊԸ
ք.Վանաձոր,Տավրոս 21փ 22տ
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
հ/հ 1150016117777758
ՀՎՀՀ 06958302

---------------------- Ա. Աբրահամյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2021թ. կնքված
ՀՀԼՄՎՔԳՀԱՇՁԲ-21/84 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________ | ______________ |
| գտնվելու վայրը ______ ____ | գտնվելու վայրը ______ |
| հհ ______________ | հհ ______________ |
| հվհհ ______________ . | հվհհ ______________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ______________ | ______________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________ | ______________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
« » 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱԾՁԲ-21/84 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ______________________-ին կնքված N___ _______
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**

հայտը նախագծածներկայացուցիչ՝

_______________________ _______________________
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_______________________ _______________________
ստորագրություն ստորագրություն